ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻՊԵՄԶԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 37-Ն

<< 23 >> դեկտեմբերի 2016 թվական գյուղ Անիպեմզա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻՊԵՄԶԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի ԹԻՎ 4-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի <<բ>> ենթակետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիպեմզայի համայնքի ավագանին

որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիպեմզայի համայնքի 2017-2021 թվականների զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիպեմզայի համայնքի ավագանու 2013 թվականի մարտի 10-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիպեմզայի համայնքի 2013-2016 թվականների զարգացման ծրագիրը հաստատելու մասին>> թիվ 4-Ն որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

ԱՐԹՈՒՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ՝	կողմ	
ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՅԱՆ՝	կողմ	
ԳԵՎՈՐԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ՝	կողմ	
ՀԱՄՄԻԿ ՆԱԶԱՐՅԱՆ՝	կողմ	
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ՝	կողմ	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԹԱՌԼԱՆՅԱՆ

«23» դեկտեմբերի 2016 թվական
գյուղ Անիպեմզա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՂ ԱՆԻՊԵՄԶԱ

ԾՐԱԳԻՐ

ԱՆԻՊԵՄԶԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 - 2021 թթ. ՍՈՑԻԱԼ - ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ԿԱԶՄԵՑ՝ ԱՆԻՊԵՄԶԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԹԱՌԼԱՆՅԱՆԸ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝ *ԱՆԻՊԵՄԶԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏՈՒՄ. ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 37-Ն :*

գ. ԱՆԻՊԵՄԶԱ - 2017 Թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1.1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ
1.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՀՐԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՌԵԼԻԵՖԸ
1.3. ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
1.4.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ
1.5.ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
1.6.ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
1.7.ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
1.8. ԽՄԵԼՈՒ և ՈՌՈԳՄԱՆ ՋՈՒՐ
1.9. ՏՐԱՆՍՊՈՐՏ և ԿԱՊ
1.10. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
1.11.ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ
1.12.ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ
1.13. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
1.14.ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ
1.15.ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ
1.16.ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ
1.17.ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1.18.ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

2.ՀԱՄԱՅՆՔԻ ՈՌԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1.1.Համայնքի ռազմավարությունն է.
1.2.Հիմնական նպատակները

3.ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ԳՆԱՀԱՏՈՒՄ և ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

3.1.ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ և ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
3.2.ՎԵՐՋԻՆ 3 ՏԱՐԻՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ
3.3.ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ
3.4 ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՋԻՆ 10 ՏԱՐԻՆԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

4. ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՁՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ,
ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ և ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵԱԿԵՐՊՈՒՄ

5.ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ՀԱՎԵԼՎԱԾ թիվ 1.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզի Անիպեմզա համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագիրը մշակված է ՀՀ սահմանադրությամբ և օրենքներով տեղական ինքնակառավարման մարմիներին վերապահված իրավասությունների շրջանակներում և հանդիսանում է համայնքի համալիր զարգացմանն ուղղված ուղեցույց փաստաթուղթ:

Քառամյա ծրագիրն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ – տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավորման գործընթացի իրականացումը: Ծրագիրը ձևավորվել է համայնքի վրա արտաքին միջավայրի ազդեցության համակողմանի վերլուծության, սոցիալ-տնտեսական ներքին իրավիճակի գնահատման, առկա և ներուժային հնարավորությունների /բնական, աշխարհագրական, տնտեսական, սոցիալական, ֆինանսական, մարդկային/ հաշվառման արդյունքում:

Այն համայնքի զարգացմանն ուղղված ուղեցույց փաստաթուղթ է, որը կարող է հաշվի առնվել կառավարության տարածքային քաղաքականության, սահմանամերձ հանայնքների զարգացման, աղքատության կրճատման և մարզի զարգացման ռազմավարական ծրագրերում:

Ծրագիրն ավելի իրատեսական դարձնելու համար գնահատվել են համայնքի ֆինասական ռեսուրսները և առաջարկված ծրագրերից ակնկալվող արդյունքները, կատարվել են իրավիճակի վերլուծություններ և կանխատեսումներ, ներկայացվել են համայնքի ներկա իրավիճակը բնութագրող վիճակագրական տեղեկություններ:

Ծրագրում ներառված խնդիրները և դրանց առաջնահերթությունները չեն հավակնում լինել վերջնական և ծրագրերի իրականացման ընթացքում արտաքին և ներքին գործոնների ազդեցությունից կախված ենթադրվում են համապատասխան փոփոխություններ:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԿԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1.1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Անիպեմզա համայնքը Հայաստանում Խորհրդային կարգերի հաստատումից հետո կառուցված առաջին արդյունաբերական քաղաքատիպ ավաններից է: Բնակավայրի հիմնադրումը պայմանավորված է եղել 1926 թվականին Անիպեմզա կոմբինատի կառուցմամբ: Բնակավայրի հիմնադիրներն են հանդիսանում համայնքի ներկայիս տարածքի հարևանությամբ գտնված նախկին Զաղա գյուղի բնակիչները, Անիպեմզա կոմբինատում աշխատանքի բերումավ տեղափոխված ինչպես հարակից բնակավայրերից, այնպես էլ հանրապետության տարբեր վայրերից գործուղված մասնագետների ընտանիքները:

Սկզբնական շրջանում բարձր է եղել բնակչության հոսունությունը: Անիպեմզա ավանը որպես բնակավայր լիարժեք կարգով ձևավորվել է 1936թ., և կամբինատը համալրվել է անհրաժեշտ բանվորական աշխատուժով և մասնագետ կադրերով: Հանրապետության վարչատարածքային շրջանային բաժանումից հետո, 1936թվականին ավանը ընդգրվել է Անիի շրջանի կազմում, իսկ 1996թվականին << վարչատարածքային մարզային բաժանումից հետո, Անիպեմզան ստացել է գյուղական համայնքի կարգավիճակ և որպես վարչատարածքային առանձին միավոր՝ ընդգրկվել Շիրակի մարզի կազմում:

Անիպեմզան ընգրկված է հանրապետության սահմանամերձ բնակավայրերի ցանկում:

Անիպեմզայում հայտնաբերված է զարգացած երկաթե դարի դամբարանադաշտ / Ք. ա. I – II հազարամյակներ / , որի պեղումների ժամանակ գտնվել են զենքեր, զարդեր և պատմամշակութային այլ արժեքներ: Արժեքավոր է եգիպտական մածուկից պատրաստված առյուծի փոքր արձանը և պատմամշակութային մեծ արժեք ներկայացնող V դարի կառույց Երերույքի տաճարը:

Բնակավայրի տարածքը հարուստ է շինարարական նյութերով՝ պեմզայով, տուֆով և բազալտով:

Բնակավայրը հատկապես զարգացում է ապրել հետպատերազմյան տարիներին: Կառուցվել են 19 բազմաբնակարան բնակելի շենքեր՝ 120 բնակարաններով, կառուցվել է դպրոց, գրադարան, մշակույթի տուն, հիվանդանոց, մանկապարտեզ, առևտրի և բնակչության սպասարկման տարբեր օբյեկտներ: Բնակավայրը, լինելով արդյունաբերական ավան, իր հիմնադրման օրվանից առ այսօր վարելահողեր չի ունեցել, իսկ 539.67 հա արոտները աղքատիկ են և ոչ պիտանի անասապահության համար :

Ոռոգման և կենցաղային կարիքների համար ջուրը պոմպակայանի միջոցով հանվել է բնակավայրի հարևանությամբ հոսող Ախուրյան գետից:

Բնակավայրի սոցիալ – տնտեսական թույլ զարգացվածությունը և բնակչության ցածր կենսամակարդակը հիմնականում պայմանավորված են գյուղատնտեսական նշանակության հողերի բացակայությամբ, ինչպես նաև՝ Անիպեմզա կոմբինատի գործունեության դադարեցմամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՀՐԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՌԵԼԻԵՖԸ

Անիպեմզա գյուղական համայնքը տեղաբաշխված է Արագած լեռան հյուսիս-արևմտյան լանջին, Շիրակի դաշտի հարավ-արևմտյան և Թալինի սարավանդակի հյուսիսային մասում՝ Ախուրյան գետի արևելյան ափին:

Արևմուտքից սահմանակից է Թուրքիային, հյուսիսից՝ Անիավան և Բագրավան համայնքներին, և հարավից՝ Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանին: Համայնքի տարածքում տեղակայված է սահմանապահ ուղեկալ և ամբողջ տարածքը շրջապատված է Թուրքիայից բաժանող լարափակոցով: Մինչև 1990թ. բնակավայրի մուքը և ելքը եղել է անցագրային ռեժիմով:

Տարածքը ծովի մակերևույթից գտնվում է 1350 մ. բարձրության վրա և ընդգրկված է հանրապետության նախալեռնային բնակավայրերի ցանկում:

Բնակավայրին առանձնահատուկ են ցուրտ, ձյունառատ ձմեռները և զով ամառային եղանակները: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է 9 - 10 աստիճան: Տարեկան միջին տեղումները կազմում են 350-500մմ., որոնք առանձնահատուկ են ապրիլ-մայիս և հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին:

Բնակավայրը մշտապես վտանգված է կարկտահարությամբ և տևական երաշտով: Տարածքը գտնվում է ուժեղ սեյսմիկ գոտում: Հիշարժան են 1926 և 1988թթ. աղետալի երկրաշարժերը:

Համայնքի վարչական տարածքը զբաղեցնում է 735.0հա., որից 61.5հա բնակավայրի հողեր են, 558.0 հա. գյուղատնտեսական նշանակության , 78.5 հա. հանքավայրերի, 17.5հա. տրանսպ. և կոմ., 19.5հա. պատմամշակութային, ջրային և հատուկ նշանակության հողեր են:

Բնակավայրի տարածքում է գտնվում տեխնիկական պեմզայի և պեմզային տուֆի հանրապետության և տարածաշրջանի խաշորագույն հանքավայրը: Հրաբխային գործունեության հետևանքով առաջացած արդյունավետ շերտը կազմված է պեմզանյութից, իսկ վերին շերտը՝ դեղնագույն պեմզային տուֆերից: Հանքադաշտի

ընդհանուր տարածությունը կազմում է 1.8ք.կմ., հետազոտված պաշարները՝ 37.8 մլն. խ. մ., որից տուֆեր՝ 20.4 մլն. խ. մ. :

Բնակավայրը գտնվում է նախկին շրջկենտրոնից 55կմ., մարզկենտրոնից 50կմ. և մայրաքաղաքից՝ 102կմ. հեռավորության վրա: Բնակավայրից 3կմ հեռավորությամբ է անցնում Գյումրի- Արմավիր- Երևան հանրապետական նշանակության ճանապարհը և Գյումրի - Երևան երկաթուղին : Բնակավայրը երկաթուղային կապ ունի Անի կայարանի հետ:

1.3 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Անիպեմզան հիմնադրվել է Հայաստանում Խորհրդային կարգերի հաստատումից հետո, որպես արդյունաբերական քաղաքատիպ ավան: Բնակավայրի հիմնադրումը պայմանավորված է եղել 1926 թվականին Անիպեմզա կոմբինատի կառուցմամբ: Բնակավայրի հիմնադիրներն են Անիպեմզայի հարևանությամբ գտնված նախկին Զաղա գյուղի բնակիչները և կոմբինատում աշխատանքի բերումով հարակից գյուղերից և այլ բնակավայրերից տեղափոխված ընտանիքները: Անիպեմզա կոմբինատի գործարկումից և հետագա տարիներին նրա արտադրական հզորությունների ավելացման հետ զուգնթաց ավելացել է նաև ավանի բնակչության թիվը: Մինչև պատերազմը ավանը ունեցել է մինչև 2000 բնակչություն:

Հայրենական Մեծ պատերազմից հետո ավանի բնակչության թիվը կտրուկ նվազել է : Համայնքը առավելագույն բնակչություն՝ շուրջ 3 000 մարդ է ունեցել 1970-1975 թվականներին:

Վերջին 20 տարիներին համայնքի բնակչության թիվը նվազել է շուրջ 500 մարդով, նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների թիվը նվազել է կրկնակի չափով և արձանագրվել է բնակչության կազմի ծերացում: Ներկայումս համայնքի աշխատունակ բնակչության 10 - 15 տոկոսը մեկնում են սեզոնային արտագնա աշխատանքի և շարունակվում է հատկապես երիտասարդ ընտանիքների արտագաղթը համայնքից:

Համայնքի բնակչության կազմը՝ ըստ 2013թ. հաշվառման / մարդ /.

- Մշտական բնակչություն – 509

Այդ թվում՝

- Տղամարդ – 244
- Կին – 265
- Առկա բնակչություն - 494
- Ընտանիքների թիվը - 135
- Նախադպրոցական տարիքի երեխաներ / 0 – 5 տարեկան / – 18
- Դպրոցական տարիքի երեխաներ / 7 – 18 տարեկան / – 49
- Հասուն տարիքի բնակչություն/18 – 65 տարեկան/ – 396
- Տարեց բնակչություն / 65 և ավելի / – 40
- Ընտրողների թիվը – 320
- Կենսաթոշակառուների թիվը –41
- Հայրենական պատերազմի մասնակիցներ – 0
- Հաշմանդամներ – 13

այդ թվում՝

- Մանկուց հաշմանդամներ – 1
- Ազատամարտիկներ – 0
- Բռնագաղթվածներ – 0
- Նպաստառու ընտանիքներ – 13
- Աշխատունակ բնակչություն – 396
- Զբաղբածների թիվը - 104
- Այլազգիներ – 2
- Գործազուրկների թիվը – 292

Համայնքի բնակչության բաշխումն ըստ զբաղվածության հիմնական ճյուղերի /մարդ /

- Գյուղատնտեսական ինքնազբաղվածություն – 39
- Վարձու աշխատանք գ/տ ոլորտում – 0
- Վարձու աշխատանք ոչ գ/տ ոլորտում,մասնավոր-0
  / քարի արտադրության և մշակում / – 38
- Վարձու աշխատանք ոչ գ/տ ոլորտում,պետական – 27
- Ոչ գ/տ ինքնազբաղվածություն – 0
- Ուսանողներ - 4
- Բանակում ծառայողներ - 1

Համայնքի բնակչության բաշխումն ըստ կրթամակարդակի / տոկոս՝ հաստն տարիքի բնակչության թվի նկատմամբ /

- Տարրական – 1.5
- Հիմնական – 6.0
- Միջնակարգ - 75.6
- Միջնակարգ մասնագիտական – 10.1
- Բարձրագույն - 6.8

1.4.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Ժողովրդի իշխանությունն իրականացնելու և հանայնքային խնդիրները լուծելու նպատակով համայնքում օրենքով սահմանված կարգով ընտրված են համայնքի ավագանի / ավագանու 5 անդամ / և համայնքի ղեկավար: 2016թ. հոկտեմբերի 2-ին համայնքում կայացած համայնքի ղեկավարի ընտրությունների արդյունքներով համայնքի ղեկավար է ընտրվել գործող համայնքի ղեկավար Հարություն Թառլանյանը, ծնված 1960թ., ունի բարձրագույն կրթություն, ՀՀԿ անդամ է 2016թվականից, ընտրված է համայնքի ղեկավար՝ 2002թվականից:

« Տեղական ինքնակառավարման մասին » և «Համայնքային ծառայության մասին » ՀՀ օրենքների համաձայն ձևավորվել է համայնքի ղեկավարի աշխատակազմ հետևյալ կառուցվածքով.

Համայնքային ծառայության պաշտոններ՝

- Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար – 1 միավոր
- Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ - հաշվապահ – 1 միավոր
- Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ - 1 միավոր
- Համայնքի ղեկավարի համակարգչի օպերատոր – 1 միավոր

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱԶՄԸ

N	Անուն, ազգանուն	Ծննդ.թիվը	Կրթություն	Կուս.պատկան.
1	Արթուր Խաչատրյան	1972	միջնակարգ	անկուս.
2	Արթուր Հարոյան	1984	միջնակարգ	անկուս.
3	Գևորգ Հարությունյան	1986թ.	միջնակարգ	անկուս.
4	Համիկ Նազարյան	1959թ.	բարձրագույն	ՀՀԿ
5	Սուրեն Գևորգյան	1986թ.	միջնակարգ	անկուս.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ

№	Անուն, ազգանուն	Պաշտոնը	Կրթությունը	Ծննդ.թիվը
1	Լուսինե Բաղդյան	Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար	բարձրագույն	1991թ.
2	Արսեն Դավթյան	Առաջատար մասնագետ-հաշվապահ	միջն.մասն.	1964 թ.
4	Ղազարյան Գայանե	Առաջին կարգի մասնագետ	միջ.մասն.	1964 թ.
5	Ցոլակ Գևորգյան	համակարգչի օպերատոր	միջնակարգ	1977թ

« Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի և համայնքի ավագանու կանոնակարգի համաձայն համայնքում կազմավորվել են մշտական գործող հետևյալ հանձնաժողովները՝

- Վարչական հարցերի հանձնաժողով
- Անչափահասների հարցերի հանձնաժողով
- Խնամակալության և հոգաբարձության հարցերի հանձնաժողով
- Սոցիալական ապահովության հարցերի հանձնաժողով:

Համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կառուցվածքը և ներքին հարաբերությունները գրաֆիկական տեսքով ներկայացված է թիվ 1 հավելվածում:

1.5.ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 14.03.1997թ. « ՀՀ համայնքների սեփականության գույքի ցանկը սահմանելու մասին» թիվ 51 որոշմամբ:

Համայնքի գույքը ֆիզիկական և բարոյական մեծ մաշվածություն ունի: Քայքայված և անմխիթար վիճակում են համայնքային սեփականության 19 բազմաբնակարան բնակելի շեքերը 120 բնակարաններով, մշակույթի տունը և գրադարանի շենքը, ընթացիկ նորոգման կարիք ունի մանկապարտեզի շենքը:

Անբարեկարգ և քայքայված վիճակում են 7 կմ. ընդհանուր երկարության ներհամայնքային ճանապարհները:

Համայնքապետարանը չունի շենքային հարմարություններ և որպես գրասենյակ օգտագործում է « Անիպեմզա կոմբինատ » ԲԲԸ-ի սեփականությունը հանդիսացող վարչական շենքի հարմարեցված երկու աշխատասենյակները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿ

N	Գույքի անվանումը	Չափի միավոր	Քանակը	Տեխնիկական վիճակի բնութագիր
1	Մշակույթի տուն	հատ	1	Ենթակա է հիմնանորոգման
2	Մանկապարտեզ	հատ	1	Ենթակա է ընթ.նորոգման
3	Խմելու ջրի ներտնտեսային ցանց	կմ	10.0	Ենթակա է հիմնանորոգման
4	Օրվա կարգավորման ջրամբար /420խ.մ.տարող./	հատ	2	Ենթակա է ընթ.նորոգման
5	Բնակարանային ֆոնդ	ք.մ.	8 800	Ենթակա է հիմնանորոգման
6	Գրադարան	հատ	1	Ենթակա է հիմնանորոգման
7	Գերեզմանատուն	հատ	1	ցանկապատված է
8	Ներհամայնքային ճանապարհներ	կմ.	7.0	Ենթակա է հիմնանորոգման
9	Գրադարանի գրքային ֆոնդ	կտոր	5540	մաշված է
10	Գրասենյակային գույք	կտոր	12	մաշված է

12	Արտաքին լուս. ցանց	*	*	ենթակա է վերականգնման

1.6.ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բնակավայրը չունի կեղտաջրերի և անձրևաջրերի հեռացման համակարգեր: Կեղտաջրերի հեռացումը համայնքում կատարվում է անհատական խորքային հորերի միջոցով: Բնակավայրում աղբահանությունը կատարվում է համայնքի բնակիչների կողմից անհատական նախաձեռնությամբ և սանիտարական օրեր կազմակերպելու միջոցով: Բնակավայրը նպատակային նշանակության աղբատեղի չունի: Սակավ է համայնքի կանաչապատ և ծառատունկ տարածքները , բարձր է օդի աղտոտվածությունը:

1.7.ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքի բնակարանային տնտեսությունը ունի հետևյալ տեսքը.

Համայնքի բնակֆոնդը կազմում է համայնքային սեփականության բազմաբնակարան 19 շենքերը՝ 120 բնակարանով , 8800ք.մ. ընդհանուր մակերեսով: Համայնքը անհատական սեփականության բնակելի տներ չունի: Բնակավայրը գտնվելով 1988թ. «Սպիտակի» աղետալի երկրաշարժի գոտում և բնակֆոնդը ստացել է 2-3 աստիճանի տարբեր վնասվածություններ: Համայնքի բնակֆոնդը թուլացել և խարխլվել է նաև պեմզահանքում տասնյակ տարիներ շարունակ կատարված պայթեցումներից:

Համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերը գտնվորմ են քայքայված և անբարեկարգ վիճակում, հատկապես անմխիթար վիճակում են շենքերի տանիքները, որի պատճառով տասնյակ բնակարաններ լքված են բնակիչների կողմից :

Համայնքի բնակարանային տնտեսությունը ունի հետևյալ տեսքը.

h/h	Բնակարանային տնտեսության բնութագրիչներ	Շենքերի քանակը / հատ /	Բնակա-րանների քանակը / հատ /	Ընդհանու բնակմակերեսը / քառ.մ. /

	Համայնքային սեփականության բազմաբնակարան բնակելի շենքեր	19	120	8 800
	1 սենյականոց բնակարաններ	*	10	503
	2 սենյականոց բնակարաններ	*	39	2150
1	3 սենյականոց բնակարաններ	*	57	4 172
	4 և ավել սենյականոց բնակարաններ	*	14	1975
	Կառուցման ժամկետները			
	Մինչև 10տարի առաջ կառուցված	-	-	-
2	11-20տարի առաջ կառուցված	-	-	-
	21-50տարի առաջ կառուցված			
	50 և ավելի տարի առաջ կառուցված	19	120	8 700
3	*Անհատական առանձնատներ*	-	-	-
	ԸՆԴԱՄԵՆԸ ԲՆԱԿՖՈՆԴ	19	120	8 700

1.8. ԽՄԵԼՈՒ և ՈՌՈԳՄԱՆ ՋՈՒՐ

Համայնքի 10 կմ. ընդհանուր երկարության ջրամատակարարման ներտնտեսային ցանցը և 500 խ.մ. տարողության օրվա կարգավորման 2 ջրամբարները կառուցվել են 1970 - ական թվականներին:

Համայնքի տնամերձ հողամասերի ոռոգման և բնակչության կենցաղային կարիքների համար ջուրը մատակարարվել է Անիպեմզա կոնբինատի պոմպակայանի միջոցով, սակայն պոմպակայանը էներգոտար լինելու պատճառով շուրջ 20 տարի է ինչ գրեթե չի շահագործվում:

Պետ. բյուջեի 2009թ. ծրագրում է ընդգրկված Անիավան - Անիպեմզա համայնքների ջրամատակարարման համակարգի կառուցումը: Ծրագրի իրականացման համար նախատեսված է իրականացնել 137,0 մլն. դրամի ներդրում : 2010թ. ավարտվել են ծրագրի աշխատանքները , համաձայն որի բնակավայրերի ջրամատակարարումը իրականացվում է Բագրավան համայնքի տարածքում խորքային հորից:

1.9. ՏՐԱՆՍՊՈՐՏ և ԿԱՊ

Բնակավայրով անցնող Գյումրի - Արմավիր - Երևան հանրապետական նշանակության ճանապարհը ասֆալտապատ է , որը համայնքի համար հանդիսանում է նաև միջհամայնքային, մարզկենտրոնի և մայրաքաղաքի հետ կապող ճանապարհ:

Անբարեկարգ և քայքայված վիճակում են մայրուղի - բնակավայր 3 կմ. և ներհամայնքային 4 կմ ընդհանու երկարության ճանապարհները:

Բնակավայրը չունի փոստային բաժանմունք և սպասարկվորմ է Անիավան համայնքի բաժանմունքի կողմից: Բնակավայրը չունի տեղական հեռախոսակապ և օգտվում է « ԱՐՄԵՆՏԵԼ » և « ՎԻՎԱՍԵԼ ՄՏՍ » « ՅՈՒԲՈՄ » բջջային հեռախոսակապից:

Բնակավայրը ընդունում է 4 հանրապետական և 3 մարզային հեռուստահաղորդումներ:

Բնակավայր - մարզկենտրոն տրանսպորտային կապը ապահովվում է միկրոավտոբուսի 2 երթուղու միջոցով : Մայրաքաղաքի և համայնքների հետ կապը ապահովվում է Անիպեմզա-Երևան միկրոավտոբուսի և Գյումրի - Երևան երկաթուղու միջոցով:

1.10.ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքը համախմբված է, որը սակայն չի հանգեցրել սոցիալական այնպիսի ինստիտուտների ձևավորմանը, ինչպիսիք են միությունները, միավորումները, նախաձեռնող խմբերը և այլն: Բնակչությունը սերտ կապեր ունի մոտակա բոլոր համայնքների հետ:

Համայնքը համագործակցության կապեր ունի հանրապետությունում գործող հանրապետական,միջազգային կազմակերպությունների և հիմնադրամների հետ:

Հոգևոր ոլորտում համայնքը համագործակցում է Շիրակի թեմի Առաջնորդարանի հետ:

1.11.ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Համայնքի վարչական տարածքը կազմում է 735.0 հա. է, որից՝

1. Գյուղ. նշանակության հողեր – 558.0 հա.

այդ թվում՝

- վարելհող - 18,52 հա.
- արոտ - 531.2
- գյողատնտեսական նշ. այլ հողեր - 8.3 հա.

2. Բնակավայրի հողեր – 61.5 հա.
3. Հանքավայրերի հողեր – 78.5 հա.
4. Ճանապարհների տակ հողեր - 17.5 հա.
5. Մարզական ու պատմամշակութային նշանակության հողեր – 4.9 հա.
6. Անտառային և ջրային ֆոնդի հողեր 7.6 հա.
7. Հատուկ նշանակության հողեր – 7.0 հա.

1.11. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Անիպեմզա կոմբինատը եղել է հանրապետության շինանյութերի արտադրության խոշորագույն ձեռնարկություններից: Կոմբինատում տարեկան արտադրվել է 800-850 հազ. խ.մ. պեմզա, 40-45 հազ. խ.մ. տուֆ քար, մինչև 13.5 հազ. տոննա անդեզիտային ալյուր, որի հիմնական մասը առաքվել է ԽՍՀՄ տարբեր շրջաններ: ԽՍՀՄ-Ի փլուզումից և հանրապետության տնտեսական շրջափակումից հետո դադարեցվել է ձեռնարկության գործունեությունը և մասնավորեցվել: Ձեռնարկության արտադրամասերը ապամոնտաժվել, օտարվել են և որևէ նախաձեռնություն կամ ծրագրեր չկան արտադրական նախկին հսկայի վերագործարկման համար:

Ներկայումս համայնքում գործում են տուֆ քարի արդյունահանման և վերամշակման 4 փոքր ձեռնարկություններ՝

- « Նիկոլ տուֆ » ՍՊԸ
- Ա/Ձ « Ս. Գևորգյան »
- Ա/Ձ « Գ. Ղազարյան »
- << ԹԱՌԼԱՆ ՔԱՐ>> ՍՊԸ

« Անի » տեսակի տուֆ քարը մեծ պահանջարկ ունի հանրապետությունում և ներկայումս համայնքը ունի բավարար աշխատանքային ռեսուրսներ և տեխնիկական հագեցվածություն քարի արտադրության և վերամշակման ճյուղը զարգացնելու համար: Ներկայումս համայնքում գործող արտադրամասերում աշխատում են 25 մարդ :

1.13. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Բնակավայրը, լինելով արդյունաբերական ավան, իր հիմնադրման օրվանից վարելահողեր չի ունեցել, իսկ 539.7 հա արոտները աղքատիկ են ոչ պիտանի անասապահության համար: Համայնքի բնակչությունը չի օգտվել հողերի սեփականաշնորհումից և համայնքում գյուղացիական տնտեսություններ չեն կազմավորվել: Համայնքի բնակչությունը բազմիցս հարց է բարձրացրել հանրապետության բարձրագույն իշխանության մարմիններին՝ հարևան համայնքների սեփականության վարելահողերից և արոտներից Անիպեմզա գյուղական համայնքին հող հատկացնելու խնդրանքով, սակայն մինչև օրս հարցը դրական լուծում չի ստացել:

Համայնքի առանձին ընտանիքներ զբաղվում են անասնապահությամբ, սակայն գնովի կերերի բազայի վրա այս ճյուղը շահութաբեր չէ և չի կարող զարգանալ: Տնտեսությունների կողմից պահվում են 129 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ և 257 գլուխ մանր եղջերավոր անասուններ, առանձին տնտեսություններ զբաղվում են մեղվաբուծությամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

1. Անասնագլխաքանակը

/ գլուխ /

Գյուղ. կենդանիների տեսակները	Չափի միավոր	01.01.2017թ.
Խոշոր եղջերավոր անասուններ	գլուխ	129
որից՝ կովեր	գլուխ	62
Խոզեր	գլուխ	12
Ոչխարներ և այծեր	գլուխ	257
Թռչուններ	թև	268
Մեղվաընտանիքներ	հատ	119

1.Անասնապահական մթերքների արտադրության համախառն ծավալները և անասունների մթերատվությունը

Անասնապահական մթերքի տեսակը	Չափի միավոր	2017թ.

Մսի իրացում	տոննա	6,5
Կաթի արտադրություն,	տոննա	60.0
Բրդի արտադրություն	տոննա	0.4
Ձվի արտադրություն	հազ. հատ	15.2
1 կովի կաթնատվությունը	կգ	1400
1 տավարի միջին մսատվությունը	կգ	120
1 ոչխարի բրդատվությունը	կգ	2.2
1հավի ձվատվությունը	հատ	120

1.14.ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Համայնքն ունի հանրակրթական մեկ դպրոց, որտեղ սովորում է 36 աշակերտ: Դպրոցում աշխատում են 9 մանկավարժներ , որից 6 - ը ունեն բարձրագույն կրթություն: Դպրոցի շենքը 2005թ. նորոգվել է պետ. բյուջեի միջոցներով՝ 57.0 մլն. դրամ նախահաշվային արժեքով:

Համայնքի միակ մշակութային օջախը Մշակույթի տունն է : Մշակույթի տունը կառուցվել է 1950- ական թթ. և մինչև օրս հիմնական նորոգման չի ենթարկվել: Շենքի քայքայվածության և անբարեկարգ վիճակի պատճառով այն գրեթե չի օգտագործվում և չի ծառայում համայնքի կարիքների համար: Նորոգման կարիք ունի նաև գրադարանի շենքը, որն ունի 5540 կտոր գրականություն:

Մանկապարտեզի շենքը նույնպես գտնվում է քայքայված ու անբարեկարգ վիճակում:

Համայնքում համապատասխան հարմարություններ չկան համայնքի բնակչության հանգստի և ազատ ժամանցի կազմակերպման, երեխաների մշակութային և գեղագիտական դաստիարակության համար: Համայնքում համապատասխան հարմարություններ չկան նաև սպորտի և ֆիզիկական կուլտուրայի զարգացման համար:

Միջոցների բացակայության պատճառով համայնքը չի կարող սեփական նախաձեռնությամբ կազմակերպել համայնքի մշակույթի տան, գրադարանի և մանկապարտեզի շենքերի նորոգման և գույքային համալրման աշխատանքները:

Համայնքի բնակչության առողջապահական սպասարկումն իրականացվում է

« Անիպեմզայի առողջության կենտրոն » ՓԲԸ- ի միջոցով, որտեղ աշխատում են 1 բժիշկ և 1 բուժքույր: Կենտրոնի շենքային հարմարությունները բավարար են :

1.15.ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Տուֆ քարի, պեմզանյութի և բազալտի մեծ պաշարների առկայությունը.
- Տուֆ քարի արտադրության և վերամշակման ձեռնարկությունների առկայությունը
- Տուֆ քարի արտադրության և վերամշակման ճյուղի զարգացման համար աշխատանքային ռեսուրսների և տեխնիկական միջոցների առկայությունը.
- Գյումրի-Արմավիր մայրուղուն մոտ գտնվելը.
- Երկաթուղային կապի առկայությունը.
- Բարձրագույն և միջնակարգ կրթությամբ մասնագետ կադրերի, բանվորական աշխատուժի առկայությունը.
- Պատմամշակութային արժեքների առկայությունը:

1.16.ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Գյուղատնտեսական նշանակության հողերի բացակայությունը.
- Բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները և բարձր սեյսմիկ գոտում գտնվելու հանգամանքը.
- 1988 թ. երկրաշարժի և հանքերի պայթեցումների հետևանքով համայնքի բնակֆոնդին հասցված վնասները, բազմաբնակարան բնակելի շենքերի վթարային, քայքայված և անբարեկարգ վիճակը.
- Գործազրկության բարձր մակարդակը, համայնքի բնակչության սոցիալական անապահով վիճակը և ցածր կենսապայմանները.
- Մշակույթի տան , մանկապարտեզի և գրադարանի շենքերի քայքայված ու անբարեկարգ վիճակը.
- Հանգստի գոտու / պուրակ, այգի / բացակայությունը.
- Համայնքապետարանի շենքի բացակայությունը.
- Ներհամայնքային ճանապարհների քայքայված ու անբարեկարգ վիճակը.
- Երիտասարդ ընտանիքների արտահոսքը համայնքից.

- Տեղական բյուջեի սեփական եկամուտների բացակայությունը և բյուջեի սահմանափակ հնարավորությունները.

1.17.ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Տուֆ քարի, պեմզայի և բազալտի հանքավայրերի շահագործման ծավալների ավելացման և վերամշակման ճյուղի զարգացման միջոցով նոր աշխատատեղերի ստեղծումը
- Հարևան համայնքների համայնքային սեփականության գյուղատնտեսական նշանակության հողերից համայնքին հողատարածքներ տրամադրելու միջոցով գյուղատնտեսության / դաշտավարություն, անասնապահություն / ճյուղի զարգացումը.
- Անիպեմզայի պոմպակայանի վերագործարկման միջոցով բնակավայրի ոռոգման և կենցաղային ջրի մատակարարման վերականգնում.
- Համայնքի տարածքում առկա պատմամշակութային արժեքների բազայի վրա տուրիզմի զարգացումը .

1.18.ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

- Սեյսմիկ գոտում գտնվելու հանգամանքը.

- Համայնքի բազմաբնակարան բնակֆոնդի վթարային, քայքայված և անմխիթար վիճակը և գյուղատնտեսական նշանակության հողերի բացակայությունը.
- Կոյուղաջրերի հեռացման ցանցի բացակայությունը.
- Մշակույթի տան , մանկապարտեզի և գրադարանի շենքերի վթարային և քայքայված վիճակը.
- Տեղական բյուջեի սեփական եկամուտների բացակայությունը.
- Տեղական բյուջեի սահմանափակ հնարավորությունները.
- Բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները.
- Աշխատատեղեր բացակայությունը.
- Երիտասարդ ընտանիքների արտագաղթը.
- Օդի բարձր աղտոտվածությունը.
- Անտառային և կանաչապատ տարածքների սակավությունը.

2.ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1.1.Համայնքի ռազմավարությունն է.

Տնտեսական և սոցիալական ոլորտների բարեփոխումների ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները, բարձրացնել բնակչության կենսամակարդակը:

Հանքերի շահագործման և վերամշակման ճյուղի զարգացման միջոցով ավելացնել նոր աշխատատեղեր և կանխել արտագաղթը համայնքից:

1.2.Հիմնական նպատակները

- Համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերի հիմնանորոգում, բնակչության բնակարանային պայմանների բարելավում.
- Մշակույթի տան հիմնանորոգում.
- Մանկապարտեզի հիմնանորոգում.
- Գրադարանի հիմնանորոգում
- Ներհամանքային ճանապարհների նորոգում.
- Բնակավայրի կոյուղու ցանցի կառուցում.
- Մարզադաշտի կառուցում.
- Ոռոգման համակարգի վերականգնում.
- Համայնքին գյուղատնտեսական նշանակության հողերի տրամադրում, գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների կազմավորում.
- Հանքերի շահագործման ծավալների ավելացում, վերամշակման ճյուղի զարգացում.
- Համայնքի մշակութային կյանքի աշխուժացում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացում.
- Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցություն.

3.ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ և ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

3.1 ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ և ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքում ծառայություններ մատուցելու և ծրագրեր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումները:

Համայնքի բյուջեն ձևավորվում է պետբյուջեից տրվող դոտացիայից և համայնքի սեփական եկամուտներից: Վ երջին 4 տարիներին համայնքի բյուջեն կատարվել են 90 - 99 տոկոսով: Համայնքի բյուջեի 89 տոկոսը կազմում է պետբյուջեից տրամադրվող դոտացիան և սուբվենցիան: Համայնքի սեփական եկամուտները գոյանում են համայնքում հաշվառված 32 ֆիզիկական անձանց տրանսպորտային միջոցների գույքհարկից, որը իրատեսական է : Սեփական եկամուտների ցածր մակարդակի առկայության պայմաններում հնգամյա ժամկետում համայնքի բյուջեի աճը ուղղակիորեն պայմանավորված կլինի դոտացիոն գումարների աճի տեմպերից: Տեղական բյուջեի աճի ներկա տեմպերը հնարավորություն չեն ընձեռում համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններին լուծելու համայնքում առկա և հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրները: Համայնքում առկա հիմնախնդիրների լուծման հարցում անհրաժեշտ է պետական մարմինների և հանրապետությունում գործող տեղական, միջազգային կազմակերպությունների ու հիմնադրամների աջակցությունը:

Համայնքը պատրաստակամ է բաժնեմասային / համաֆինանսավորման/ կարգով մասնակցություն ունենալ այլ կազմակերպությունների կողմից համայնքներում իրականացվող կապիտալ ներդրումային ծրագրերին :

3.2. ՎԵՐՋԻՆ 3 ՏԱՐԻՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

հազ.դրամ

հ/հ	Եկամուտի տեսակը	2013թ.			2014թ.			2015թ.			2016թ		
		Պլան	կատ.	%	Պլան	կատ.	%	Պլան	կատ.	%	Պլան	կատ.	%
	Եկամուտներ, ընդհամենը	10 378,1	10 337 ,7	99,6	9459,2	9400,6	99,4	16277,7	16258,1	99,9	10538,3		
Ա	*Հարկային եկամուտներ*	408,6	378,3	92,6	449,4	398,4	88,6	547,8	546,2	99,7	494,7		

1	Հողի հարկ	5,8	5,8	100	5,8	5,8	100,0	5,8	5,8	100	6,2	6,2	100
2	Գույքահարկ	378,8	348,4	92,0	403,6	352,6	87,4	482,0	480,4	99,7	448,5		
3	Այլ հարկային եկամուտներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Բ	*Տուրքեր*	24,0	24,5	100	40,0	40,0	100	60,0	60,0	100	40,0	40,0	100
1	Պետական տուրքեր												
2	Տեղական տուրքեր	24,0	24,0	100	40,0	40,0	100	60,0	60,0	100	40,0	40,0	100
Գ	*Ոչ հարկային եկամուտներ*	541,6	531,6	98,1	577,7	570,1	98,7	603,7	585,8	97,0	603,5		
1	Համայնքային եփ. հողերի վարձավ	531,6	531,6	100	561,7	562,1	100,1	583,7	567,0	97,1	593,5		
2	Գույքի վարձավճ.	-	-		-	-	-	-	-	-	-	-	-
3	Տեղական վճարներ	10,0	0	0	16,0	8,0	50	20,0	18,8	94	10,0	-	-
4	Այլ ոչ հարկային եկամուտներ	-	-		-	-	-	-	-	-	-	-	-
5	ՏԻՄ, պետ. կողմ. լիազ. իր. հ. մ.	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
6	Մուտքեր տույժերից և տուգանք.	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
7	Օրենքով և իրավ.այլ ակտ.սահմ.այլ եկամ.	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Դ	*Պաշտոնական տրանսֆերտներ*	9427,9	9427,9	100	8432,1	8432,1	100	14126,2	14126,2	100	9440,1	9440,1	100
1	Դոտացիա	7427,9	7427,9	100	8432,1	8432,1	100	8526,2	8526,2	100	9363,8	9363,8	100
2	Սուբվենցիա	2000,0	2000,0	100	-	-	-	6600,0	6600,0	100	-	-	-
Ե	*Եկամուտներ, կապիտալի գործառնութ.*	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Զ	*Տարեսկզբի ազատ մնացորդ*	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Է	*Ֆոնդային բյուջե*	-	-	-	165,1	165,1	100	90,0	90,0	100	-	-	-

3.3. ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ 2017-2021 թթ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

հազ.դրամ

հ/հ	Եկամուտի տեսակը	2017թ. նախատես-ված	2018թ. կանխա-տեսում.	2019թ. կանխա-տեսում.	2020թ. կանխա-տեսում.	2021 կան խա-տես ում.
	Եկամուտներ,ընդհամենը	8275,5	9070,0	9630,0	10250,0	
Ա	*Հարկային եկամուտներ*	384,6	410,0	420.0	480.0	
1	Հողի հարկ	5,8	10,0	20.0	30.0	
2	Գույքահարկ	378,8	400,0	400.0	450.0	
4	Այլ հարկային եկամուտներ	-	-	-	-	
Բ	*Տուրքեր*	24.0	50.0	50.0	50.0	
1	Պետական տուրքեր	-	-	-	-	
2	Տեղական տուրքեր	24.0	50.0	50.0	50.0	
Գ	*Ոչ հարկային եկամուտներ*	490,0	610,0	660,0	720,0	
1	Համայնքայի սեփականութ. հողերի վարձավճարներ	480,0	600.0	650.0	700.0	
2	Գույքի վարձավճարներ	-	-	-	-	
3	Տեղական վճարներ	10.0	10.0	10.0	20.0	
4	Այլ ոչ հարկային եկամուտներ	-	-	-	-	
5	Տեղ. ինք. մար. պետ. կողմ. լիազ. իր. հ. մ.	-	-	-	-	
Դ	*Պաշտոնական տրանսֆերտներ*	7376,9	8000.0	8500.0	9000.0	
1	Դոտացիա	7376,9	8000.0	8500.0	9000.0	
2	Սուբվենցիա	-	-	-	-	
Ե	*Եկամուտներ, կապիտալի գործառնություններից*	-	-	-	-	
Զ	*Տարեսկզբի ազատ մնացորդ*	-	-	-	-	
Է	*Ֆոնդային բյուջե*	-	-	-	-	
6	Բյուջեի կատարում/տոկոս/	100.0	100.0	100.0	100.0	

3.4. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՋԻՆ 10 ՏԱՐԻՆԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

N	Ծրագրի անվանումը	Իրականացնող կազմակերպությունը	Ծրագրի ընդհանուր բյուջեն	որից		Իրակա-նացման տարե-թիվը
				Դոնոր կազմակ.	Համայնքի ներդրում	
1	Դպրոցի հիմնանորոգում	Պետ. բյուջե	57.0մլն.դր.	57.0մլն.դր.	-	2005թ.
2	Հիվանդանոցի ցանկապատի նորոգում	ԱՄՆ դեսպանություն ,, ՆՈՎԱ,, ծրագիր	1000 ԱՄՆ դոլար	500 ԱՄՆ դոլար	500 ԱՄՆ դոլար	2004թ
3	Զրամբարի նստվածքի մաքրում և նորոգում	Վարձատրվող հասարակական աշխատանքներ ծրագիր, համայնք	1289.4	989.4	300.0	2006թ.
4	Համայնքի կենցաղային օգտագործման ջրի ն/տ ցանցի նորոգում	Վարձատրվող հասարակական աշխատանքներ ծրագիր, համայնք	1387.2	1987.2	400.0	2007թ.
5	Համայնքի գազաֆիկացում	«Գյուղ. տարածք.տնտ. զարգ.» ծրագրի (ԻՖԱԴԻ) կողմից	107128.8 (հազ.դրամ)	107128.8 (հազ.դրամ)	2000.0 (հազ.դր.) 960գծ.մ.(խողովակ	2010թ.
6	<<Անիպեմզայի առողջ.կենտրոն >>ՓԲԸ-ի շենքի վերան.աշխ.	Պետ. բյուջե	17888,7 (հազ.դրամ)	17888,7 (հազ.դրամ)	-	2011թ.
7	Համայնքի բազմաբ.շենք.տանիքների հիմնանորոգում	Պետ. բյուջե	19014,6 (հազ.դրամ)	19014,6 (հազ.դրամ)	-	2011թ

4. ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՁՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՁԱԳՐՈՒՄ և ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ

ՁԵԱԿԵՐՊՈՒՄ

Ըստ առանձին բնագավառների ծրագրերի ընտրության և նրանց առաջնահերթության որոշման համար հիմք է հանդիսացել համայնքի ղեկավարի նախընտրական ծրագիրը և համայնքի ղեկավարի նախընտրական քարոզարշավի ժամանակ համայնքի ընտրողների կողմից տրված պատվիրանները:

Ծրագրերի իրականացման, արժեքների գնահատման և հնարավոր ֆինանսավորման աղբյուրների բացահայտման համար հիմք են հանդիսացել տեղական բյուջեի ֆինանսական միջոցների վերլուծությունը, << կառավարության տարածքային զարգացման ռազմավարությունը և հանրապետությունում գործող ներդրումային կազմակերպությունների ու հիմնադրամների հետ ստորագրված համաձայնագրերն ու հաստատած համագործակցության կապերը:

2013- 2016թթ. նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը.

Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 1

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝

<< Շիրակի մարզի Անիպեմզա համայնքի պոմպակայանի վերանորոգում:

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ և ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Պետ. բյուջեի 2009թ. ծրագրում է ընդգրկված Անիավան - Անիպեմզա համայնքների ջրամատակարարման համակարգի կառուցումը: Ծրագրի իրականացման համար նախատեսված է իրականացնել 137,0 մլն. դրամի ներդրում : Ավարտված են ծրագրի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազման աշխատանքները , համաձայն որի բնակավայրերի ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել Բագրավան համայնքի տարածքում խորքային հորի հորատման, պոմպի տեղադրման , մայր ջրատարի կառուցման և բնակավայրի ջրամատակարարման ներտնտեսային ցանցի վերականգնման միջոցով:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է բնակավայրը ապահովել մշտական ջրամատակարարմամբ, բարելավել բնակչության կենցաղային և սանիտարահիգիենիկ պայմանները: Նպաստավոր պայմաններ ստեղծել համայնքում քարի արտադրության և վերամշակման, ինչպես նաև անասնապահության ճյուղերիի զարգացման համար: Կանխել երիտասարդ ընտանիքների արտագաղթը համայնքից և ամրապնդել բնակավայրը: Նվազեցնել ռիսկի գործոնները՝ համայնքում ներդրումներ կատարելու, փոքր և միջին բիզնեսը զարգացնելու համար:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- « Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի և Քաղաքաշինության մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ծրագիրը ապահովել անհրաժեշտ տեխնիկական պայմաններով.
- Ապահովել անհրաժեշտ աշխատուժով.
- Ըստ ամենայնի աջակցել ծրագրի շինարարական աշխատանքներին.
- Ապահովել ջուրսպառման կետերում ջրաչափերի տեղադրումը.
- Ծրագրի ավարտից հետո կազմակերպել ցանցի շահագործումը, պահպանությունը և անխափան աշխատանքը.

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- Ծրագրի իրականացմամբ բնակավայրը կապահովվի էկոլոգիապես մաքուր մշտական խմելու ջրով.
- Կբարելավվի բնակչության կենցաղային և սանիտարահիգիենիկ պայմանները.
- Կկանխվի բնակչության, հատկապես կանանց և երեխաների ֆիզիկական ծանրաբեռնվածությունը.
- Կտնտեսվեն խմելու ջրի ներկրման համար կատարվող տարեկան 4.0մլն. դրամ միջոցները.
- Նպաստավոր պայմաններ կստեղծվեն համայնքում քարի արտադրության և վերամշակման, անասնապահության և գյուղ մթերքների վերամշակման ճյուղերի զարգացման համար:

- Կնվազի ռիսկի գործոնը համայնքում ներդրումներ կատարելու, փոքր և միջին բիզնեսը զարգացնելու համար.

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

- Համաձայն Անիավան - Անիպեմզա համայնքներ ջրամատակարարման համակարգերի կառուցման ծրագրի նախագծա - նախահաշվային փաստաթղթերի՝ ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 12 մլն. դրամ:
- Ծրագիրը ամբողջությամբ ֆինանսավորվում է պետբյուջեի կողմից.

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2014թ. ընթացքում:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

ՀՀ Քաղաքաշինության նախարարություն, ՀՀ Շիրակի մարզպետարան:

Ծրագրի աջակցության պատասխատատու՝

Անիպեմզա համայնքի ղեկավար՝ Հարություն Թառլանյան:

Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 2

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

ՀՀ Շիրակի մարզի Անիպեմզա համայնքի ներհամայնքային ճանապարհների փոսային նորոգում:

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ և ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքն ունի 7.0կմ. ընդհանուր երկարության ներհամայնքային ճանապարհներ, որից մասնակիորեն ասֆալտապատ է միայն բնակավայր մտնող 3.0կմ. ճանապարհահատվածը: Ներհամայնքային խճապատ ճանապարհների առանձին

հատվածներ ամբողջությամբ քայքայված են և տրանսպորտային միջոցների համար դարձել են անանցանելի:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է համայնքի տրանսպորտային և հետիոտն երթևեկության համար ապահովել բարեկարգ և հարմարավետ ճանապարհներ: Երթևեկելի դարձնել համայնքի քայքայված և անանցանելի ճանապարհները:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ուսումնասիրել ներհամայնքային ճանապարհների տեխնիկական վիճակը, ճշտել նորոգման ծավալները և կազմել թերությունների ակտ :
- Ճանապարհների նորոգումը կատարել խճապատման, սալարկման և մանրահատիկ ավազե ծածկույթի իրականացման միջոցով:
- Ծրագրի օժանդակ աշխատանքներն իրականացնել « Վարձատրվող հասարակական աշխատանքներ » ծրագրի շրջանակներում, որի համար 2014թ. հայտ - առաջարկ ներկայացնել << Շիրակի մարզպետին և կազմել ծրագիր - առաջարկի փաստաթղթերի փաթեթ:
- Ծրագրի իրականացման համար պահանջվող շինարարական նյութերը, տրանսպորտային և տեխնիկական միջոցների շահագործումը ապահովել համայնքի ներդրումների հաշվին:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համայնքի տրանսպորտային և հետիոտն երթևեկության համար կապահովվի բարեկարգ և հարմարավետ ճանապարհներ: Երթևեկելի կդառնան համայնքի քայքայված և անանցանելի ճանապարհահատվածները:

ԾՐԱԳՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

- Նախատեսվում է իրականացնել 1.5 կմ / 8 000քառ. մ./ ներհամայնքային ճանապարհների փոսային նորոգման և խճապատման աշխատանքներ:
- Ծրագրով նախատեսված օժանդակ աշխատանքների իրականացման համար « Վարձատրվող հասարակական աշխատանքներ » ծրագրի շրջանակներում ներգրավել 2.0մլն. դրամի ներդրում.
- Ծրագրի իրականացման համար պահանջվող շինարարական նյութերի, տրանսպորտային և տեխնիկական միջոցների շահագործումը ապահովել համայնքում գործող քարի արտադրությամբ և վերամշակմամբ զբաղվող ձեռնարկությունների միջոցով:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ներհամայնքային ճանապարհների փոսային նորոգման շխատանքները նախատեսել՝ 2014թ-ի 2-3-րդ եռամսյակներում:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝

Անիպեմզա համայնքի ղեկավար՝ Հարություն Թառլանյան:

Ծրագրի աջակիցներ՝ համայնքում գործող քարի արտադրությամբ և վերամշակմամբ զբաղվող ձեռնարկություններ:

ԾՐԱԳԻՐ թիվ 3

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

<< Շիրակի մարզի Անիպեմզա համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների նորոգում:

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ և ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքում կա համայնքային սեփականության 19 բազմաբնակարան բնակելի շենքեր 120 բնակարանով՝ 8 800 ք.մ. ընդհանուր մակերեսով: Բնակելի շենքերը կառուցվել են 30- 50-ական թվականներին և իրենց կառուցման օրվանից ի վեր հիմնական նորոգման չեն ենթարկվել: Համայնքի բնակֆոնդը տուժել է 1988թ երկրաշարժից և տասնյակ տարիներ շարունակ Անիպեմզայի հանքավայրերում կատարված պայթեցումներից : Բնակելի բոլոր շենքերն ունեն 2-3 աստիճանի վնասվածություններ:

Համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերը գտնվում են քայքայված և անբարեկարգ վիճակում, որի պատճառով առանձին բնակարաններ լքված են բնակիչների կողմից : Հատկապես անմխիթար վիճակում են շենքերի տանիքները,

որոնց քայքայվածության պատճառով բնակելի տները գտնվում են անբարեկարգ և քայքայված վիճակում, առկա է բարձր խոնավություն և սնկային հիվանդություններ:

Համայնքի տեղական բյուջեի սահմանափակ միջոցներով հնարավոր չէ իրականացնել համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերի նորոգման աշխատանքներ և այս հարցում անհրաժեշտ է պետական աջակցություն: 2011թվականի Պետական բյուջեի միջոցներով վերանորոգվել է համայնքի 4(չորս) բազմաբնակարանային բնակելի շենքերի տանիքները:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների նորոգմամբ կանխել շենքերի հետագա քայքայումը, բնակարանների խոնավությունը և սնկային հիվանդությունները:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ուսումնասիրել համայնքի թվով 15 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների տեխնիկակն վիճակը և կազմել թերությունների ակտ:
- Ճշգրտել նորոգման ծավալները և անհրաժեշտ ֆինանսական միջոցները:
- Ծրագիրը 2013-2014 թ.թ. պետբյուջեի ծրագրում ընդգրկելու խնդրով դիմել << Շիրակի մարզպետին և << կառավարությանը:
- Աջակցել ծրագրի իրականացման աշխատանքներին:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացմամբ կկանխվի համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերի հետագա քայքայումը, կկանխվի շենքերի խոնավությունը և սնկային հիվանդությունները, բնակչության բնակեցման համար կապահովվի անվտանգ և հարմարավետ պայմաններ:Կվերականգնվեն խոնավության և քայքայվածության պատճառով լքված բնակարանները:

ԾՐԱԳՐԻ ԾԱԿԱԼՆԵՐԸ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Անհրաժեշտ է իրականացնել շուրջ 7000ք. մ. տանիքածածկի և 14 000խ.մ կավարամածի նորոգման աշխատանքներ:

Ըստ նախնական հաշվարկների ծրագրի իրականացման համար կպահանջվի 50..0մլն դրամի ներդրում:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ծրագիրը նախատեսել՝2013- 2014թ.թ.-ին:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝

Անիպեմզա համայնքի ղեկավար՝ Հարություն Թառլանյան:

Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 4

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

<< Շիրակի մարզի Անիպեմզա համայնքի տարածքում գտնվող Երերույքի տաճարի շրջակայքի բարեկարգում տարածքի ծառատնկում:

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ և ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքի տարածքում է գտնվում 5-րդ դարի կառույց Երերույքի տաճարը, որը հանրապետության պատմաճարտարապետական եզակի կառույցներից է: Հաճախակի են զբոսաշրջիկների և հնագիտական խմբերի այցելությունները տաճար, սակայն անբարեկարգ և անհրապույր է տաճարի շրջակայքը: Զբոսաշրջիկների և այցելուների

հանգստի ու սպասարկումների համար տաճարի շրջակայքում բացակայում են տարրական հարմարությունները: Մերձակայքը զուրկ է ծառաստաններից և կանաչապատ գոտիներից:

Պատմաճարտարապետական կառույցը զբոսաշրջության ծրագրերում ընդգրկելու, զբոսաշրջիկների հետաքրքրությունները խթանելու համար անհրաժեշտ է ստեղծել նրանց հանգստի և սպասարկումների համար տարրական հարմարություններ / հանգստի տաղավար, սանիտարական հանգույցներ,աղբյուր, բացօդյա նստարաններ, ծառատունկ տարածքներ և այլն / :

Պատմաճարտարապետական կառույցը զբոսաշրջության ծրագրերում ընդգրկելու դեպքում այն կարող է լրացուցիչ եկամուտներ բերել համայնքին և նպաստել համայնքի զարգացմանը:

Հարցի առնչությամբ համագործակցության կապեր են հաստատվել << մշակույթի նախարարության և Ազգագրության ու Հնագիտության ազգային ինստիտուտի հետ:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է պատմաճարտարապետական կառույցը ընդգրկել զբոսաշրջության ծրագրերում, զբոսաշրջիկների հանգստի և սպասարկումների համար անհրաժեշտ հարմարությունների ստեղծմամբ խթանել զբոսաշրջիկների հետաքրքրությունները կառույցի հանդեպ, դրանով իսկ լրացուցիչ եկամուտներ բերել համայնքին և նպաստել համայնքի զարգացմանը:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Պատմաճարտարապետական կառույցը զբոսաշրջության ծրագրերում ընդգրկելու նպատակով հարցը ներկայացնել << մշակույթի նախարարություն և Ազգագրության ու Հնագիտության ազգային ինստիտուտ:
- Նախատեսել ծրագրային հետևյալ աշխատանքները՝
  - Խմելու ջրագծի անցկացում/ 600գծ.մ. / , աղբյուրի տեղադրում.
  - Ծառատունկի իրականացում - 1000տնկի.
  - Հավաքովի կոնստրուկցիայով հանգստի տաղավարի և սան. հանգույցների տեղադրում.

- Բացօդյա 6 հատ նստարանների տեղադրում.
- Անցուղիների կառուցում սալարկման միջոցով.
- Շրջակայքի բարեկարգում.
- Ծրագրի օժանդակ աշխատանքների կատարման համար « Կարձատրվող հասարակական աշխատանքներ » ծրագրի շրջանակներում 2014թ. ծրագիր առաջարկ ներկայացնել << Շիրակի մարզպետին:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Պատմաճարտարապետական կառույցը զբոսաշրջության ծրագրերում ընդգրկելու և զբոսաշրջիկների հանգստի և սպասարկումների համար անհրաժեշտ հարմարություններ ստեղծելու շնորհիվ կմեծանա զբոսաշրջիկների հոսքը համայնք, այն լրացուցիչ եկամուտներ կբերի համայնքին և կնպաստի համայնքի զարգացմանը:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

- Ծրագրով նախատեսված օժանդակ աշխատանքների իրականացման համար « Կարձատրվող հասարակական աշխատանքներ » ծրագրի շրջանակներում ներգրավել 2.0մլն. դրամի ներդրում.
- Ծրագրի իրականացման համար պահանջվող շինարարական նյութերը, տրանսպորտային և տեխնիկական միջոցները ապահովել համայնքում գործող քարի արտադրությամբ և վերամշակմամբ զբաղվող ձեռնարկությունների աջակցությամբ.
- Հավաքովի կոնստրուկցիայով հանգստի տաղավարը, սան. հանգույցները և նստարանները ապահովել << մշակույթի նախարարության աջակցությամբ.
- Տնկիները ապահովել « Կանաչազարդ Հայաստան » բարեգործական կազմակերպության աջակցությամբ.

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ծրագիրը իրականացնել 2014 թվականի ընթացքում:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝

Անիպեմզա համայնքի ղեկավար՝ Հարություն Թառլանյան:

Ծրագրի աջակիցներ՝

- ՀՀ մշակույթի նախարարություն
- ՀՀ Շիրակի մարզպետարան
- « Կանաչազարդ Հայաստան » բարեգործական կազմակերպություն
- Համայնքում գործող քարի արտադրությամբ և վերամշակմամբ զբաղվող ձեռնարկություններ:

5. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

N	Ցուցանիշի անվանումը	Չափի միանոր	2017թ. փաստացի	2018թ. կանխատեսում	2019թ. կանխատեսում	2020թ. կանխատեսում	2020թ. կանխատեսում	2021 թ. կանխատեսում
1	2	3	4	5	6	7		
1	Համայնքի տարածքը	հա	735.0	735.0	735.0	735.0	735.0	
2	Բնակչության թիվը	մարդ	509	515	525	530	540	
3	Տն. տնտեսությունների թիվը	ընտ.	135	135	136	137	138	
4	Ծնունդը		2	4	4	5	5	
5	Մահացությունը	մարդ	5	*	*	*	*	
6	Աշխատունակ բնակչություն.	մարդ	396	398	398	400	400	
7	Զբաղվածները ընդամենը այդ թվում ըստ տնտեսության ճյուղերի՝	մարդ	104	110	115	120	125	
	ա/ գյուղատնտեսություն /թերի բեռնվածությամբ/	մարդ	39	32	32	32	32	
	բ/արդյունաբերություն	մարդ	38	40	45	50	55	
	գ/շինարարություն	մարդ	-	-	-	-	-	
	բ/ ծառայությունների ոլորտ.	մարդ	27	27	27	27	27	
	դ/այլ ոլոտներ	մարդ		2	2	2	2	
8	Գործազրկության մակարդակը	%	57.4	60.0	60.0	60.0	60.0	
9	Առևտրի և հասարակական սննդի օբյեկտների թիվը	հատ	2	2	2	2	2	
10	Համայնքային սեփականության վարելահողեր	հա	10.0	10.0	10.0	10.0	10.0	
11	Պահուստային հողերի օգտագործման մակարդակը	%	0.0	0.0	0.0	0.0	0.0	
12	Խմելու ջրի	կմ	10.0	10.0	10.0	10.0	10.0	

	ցանցի երկայությունը							
13	Ներհամայնքային ոռոգման ցանցի երկարությունը	կմ	-	-	-	-	-	
14	Ոռոգման համակարգի տակ ընկած հողեր	հա	-	-	-	-		
15	Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	7.0	7.0	7.0	7.0	7.0	
16	Չբարեկարգված փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	7.0	5.5	5.5	5.5	5.5	
17	Ընդամենը բնակ - ֆոնդ այդ թվում՝	հատ բն./ք.մ	120 8800	120 8800	120 8800	120 8800	120 8800	
	-Համայնքային	հատ ք.մ	120 8800	120 8800	120 8800	120 8800	120 8800	
	-Մասնավոր բնակ. ֆոնդ	հատ ք.մ	-	-	-	-	-	
18	Բնակարանի կարիքավոր ընտանիքերի թիվը	հատ	-	-	-	-	-	
19	Մեկ շնչին ընկնող ջրի սպառումը	լիտր/ օր	40	40	40	40	40	
20	Ջրի կորուստները ցանցում	%	-	-	-	-	-	
21	Սովորողների թիվը հանրակրթական դպրոցում	մարդ	31	26	27	28	30	
22	Երեխաների թիվը մանկապարտեզում	մարդ	-	-	-	-	-	
23	Գյուղապետարանի և ենթակառուցվածքների աշխատողների թիվը	մարդ	5	5	5	5	5	


ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՂԱՐ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ
ՀԱՄԱԿԱՐԳ ՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐ
ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀ
Ի կարգի մասնագետ
Ի կարգի մասնագետ